

Հրածին Վ. Վարդանյան

ՍՓՅՈՒՌԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԻՉ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ

Ժամանակակից սփյուռքագիտական տեսություններում*

Բանալի բառեր – սփյուռքի տեսություններ, ինքնություն, ազգայնություն, անդրազգային ցանց, էթնիկ խումբ, հայրենիք, ընդունող երկիր, տրանսֆորմացիաներ, նույնականացում, դասական սփյուռք, հետարդիական:

Մուտք

Մարդկանց տեղաշարժերը աշխարհի մի կետից մյուսը և վերաբնակեցումները տեղի են ունեցել վաղնջական ժամանակներից ի վեր: Սակայն արդի տեխնոլոգիաների, փոխադրամիջոցների ընձեռած հնարավորությունների պայմաններում մեծացել են միգրացիոն հոսքերը: Ուստիև այդ գործընթացների հետևանքով ձևավորված էթնիկ համայնքներն ընդունող երկրների հասարակական, սոցիալ-մշակութային կյանքում այս կամ այն չափով ինտեգրվելու հետ մեկտեղ ձգտում են պահպանելու իրենց էթնոազգային ինքնությունը:

Սփյուռքը՝ որպես ուրույն սոցիալական կազմավորում, 1980-ականների վերջից և հատկապես 1990-ականներից սկսած, դարձել է գիտական լուրջ սևեռումի առարկա, կատարվել են տեսական և էմպիրիկ մեծամասշտաբ ուսումնասիրություններ: Սփյուռքի նկատմամբ հետաքրքրության աճը պայմանավորված է արդի աշխարհում նրա տնտեսական, քաղաքական, սոցիալական և մշակութային դերակատարության և ազդեցության զգալի աճով: Ուստի եթե սփյուռքի վերաբերյալ 1990-ականներին հրապարակված ուսումնասիրությունները հիմնվում էին այն մեկնակետի վրա, որ թեման գիտության կողմից պատշաճ քննության չի ենթարկվել, ապա այսօր ար-

* Հոդվածն ընդունվել է տպագրության 23.11.2021:

դեն կարելի է որոշակիորեն ամփոփել և վերլուծել կատարված տեսաբանական ընդհանրացումները: Ստորև կանդրադառնանք սփյուռքի տեսություններին և դրանցում սփյուռքի հիմնական առանձնահատկությունների ընկալման և մեկնաբանման տարբերություններին:

1. Սփյուռքների ընդհանրական հատկանիշները

1980-ականների վերջից սփյուռքի՝ որպես ուսումնասիրության առարկայի նկատմամբ հետաքրքրությունն աճեց և՛ արևմտյան երկրներում, հատկապես ԱՄՆ-ում, որը սփյուռքի վերաբերյալ տեսական միտք արտահանող հիմնական երկրներից է, և՛ հետխորհրդային երկրներում: Ընդ որում, թեև նշված երկրներում դա տեղի ունեցավ միաժամանակ, սակայն պայմանավորված էր տարբեր գործոններով. եթե Արևմուտքում գիտական շրջանակների կողմից սկսեցին լայնորեն ուսումնասիրվել պատմական իրողությունները, զանգվածային ճնշումները և վտարումները, ինչը համընկավ միջազգային միգրացիոն հոսքերի ծավալների և Արևմուտքում բազմամշակութային հասարակությունների թվի աճի հետ, ապա հետխորհրդային տարածքում սփյուռքի նկատմամբ հետաքրքրության աճը կապված էր ԽՍՀՄ փլուզման հետ, որի հետևանքով մեծ կարևորություն ստացան փոքրամասնությունների և էթնիկ խմբերի խնդիրները¹: Խորհրդային Միության տարբեր հանրապետություններում բնակվող մի շարք խմբեր Միության փլուզումից հետո առանց բնակության վայրից տեղաշարժվելու, փաստորեն, հայտնվեցին այլ պետության տարածքում, այսինքն՝ սփյուռքի կարգավիճակում:

Նշված սոցիալ-հասարակական գործընթացներին զուգահեռ՝ փոփոխության ենթարկվեց նաև «սփյուռք» եզրույթի իմաստաբանական բովանդակությունը: Թեև տևական ժամանակ սփյուռք երևույթի ընկալումը սերտորեն առնչվում էր հրեաների դեպքին, իսկ որպես հին սփյուռքներ հիշատակվում էին նաև հայկականն ու հունականը, ժամանակի ընթացքում այն կրեց կառուցվածքի ու ընդգրկման զգալի փոփոխություններ, և ներկայումս առկա է միտում՝ տվյալ բառով բնութագրելու հայրենիքից կամ ծագման երկրից դուրս հաստատված նմանատիպ յուրաքանչյուր խմբի: Հաշվի առնելով նշված իրողությունները և դրանց արտացոլումը գիտության մեջ՝ սփյուռքի տեսաբաններից Ռ. Քոհենն առանձնացրել է սփյուռքագիտության զարգացման չորս փուլ².

1. **Առաջին փուլ** – եզրույթը նախապես կիրառվում էր հրեաների առնչությամբ, իսկ հունական օրինակը մնում էր ստվերված: 1960-ական և

1 Տե՛ս Թորոյան Տ., Սարադյան Մ., Հայկական սփյուռքի հնարավորությունները և ազդեցությունը Հայաստանի Հանրապետության սոցիալ-քաղաքական գործընթացների վրա, Եր., 2017, էջ 17-18:

2 Տե՛ս Cohen R., Global Diasporas: An Introduction, Second edition, London: Routledge, 2008, էջ 1-2:

1970-ական թվականներից սկսած՝ եզրույթի գործառնության շրջանակներն ընդլայնվում են՝ ներառելով աֆրիկացիներին, հայերին և իռլանդացիներին: Ինչպես հրեաները, այս ժողովուրդները ևս իրենց ցրումն ընկալում են որպես աղետալի իրադարձություն՝ դրանով իսկ պատմական փորձառության առանցքում դնելով զոհ լինելու իրողությունը: Հետագայում այս խմբին ավելացել են նաև պաղեստինցիները:

2. **Երկրորդ փուլ** – 1980-ականներին սփյուռքը ձեռք է բերում ավելի լայն իմաստ՝ կիրառվելով ավելի մեծ թվով խմբերի վերաբերյալ՝ արտագաղթածներ (expatriates), արտաքսվածներ (expellees), քաղաքական փախստականներ (political refugees), ներգաղթյալներ (immigrants), էթնիկ և ռասայական փոքրամասնություններ (ethnic and racial minorities): Հաշվի առնելով այսպիսի խմբերի մեծ թիվը, նրանց պատմական փորձառությունը, կոլեկտիվ պատումները (narrative), հարաբերությունները հայրենի և ընդունող պետությունների հետ՝ ակնհայտ է դառնում, որ նրանք ներկայացնում են սփյուռքի ավելի բազմազան տեսակներ, քան առաջին խմբում նկարագրվածները:

3. **Երրորդ փուլ** – 1990-ականներին սոցիալ-կոնստրուկտիվիստները սկսում են քննադատել այն տեսաբաններին, որոնք չնայած ընդունում են, որ ընդլայնվել է սփյուռք համարվող խմբերի շրջանակը, և փոխվել են նրանց ուսումնասիրման մեթոդները, սակայն փորձում են սահմանափակել հասկացության ընդգրկումը: Սոցիալ-կոնստրուկտիվիստները հետարդիական գաղափարների զգուցումը ձգտում են կազմալուծելու սփյուռքի գաղափարի համար հիմնային նշանակություն ունեցող երկու տարրերը՝ հայրենիքը և էթնիկ/կրոնական համայնքը: Պնդում է արվում, որ հետարդիական աշխարհում ինքնությունները դարձել են ապատեղայնացված (deterritorialized), էլիտաների կողմից կառուցվող, միևնույն ժամանակ՝ ձկուն, իրավիճակին համապատասխան վերակառուցվող ու վերադասավորվող:

4. **Չորրորդ փուլ** – 20-րդ դարավերջին սկսվում է սփյուռքների ուսումնասիրման ներկա շրջափուլը: Սոցիալ-կոնստրուկտիվիստների քննադատությունները մասամբ ընդունվում են, սակայն ընկալվում են որպես «սփյուռք» հասկացությունն իր նկարագրական և վերլուծական առանձնահատկություններից զրկող մոտեցում, քանի որ եթե ինքնությունների հիբրիդացումն ու ապատեղայնացումը առանցքային իրողություն է սփյուռքյան փոքր խմբերի համար (հիմնականում նրանց, ովքեր ժամանակի ընթացքում երկու կամ բազում անգամներ են տեղահանվել), ապա սփյուռքի հիմնական օրինակների դեպքում (հրեաներ, աֆրիկացիներ, սիկեր և այլն) «հայրենիքի» և «տան» գաղափարները մնում են կարևոր տարրեր: Այս փուլում վերափոխվում է սփյուռքի, այդ թվում՝ նրա առանցքային

տարրերի, հիմնական հատկանիշների և իդեալական տեսակների³ ընկալումը⁴:

Ժամանակագրական մոտեցումը հիմք ընդունելով՝ կարելի է առանձնացնել սփյուռքի սահմանման և հիմնական հատկանիշների բնութագրման տեսաբանական տարրեր ուղղություններ: Ամենապարզ դասակարգմամբ կարելի է առանձնացնել հետազոտողների երկու խումբ՝ նրանք, ովքեր կողմնակից են եզրույթի սահմանափակ կիրառությանը և կարևորում են որոշակի բնութագրիչների ամկայությունը, որպեսզի տվյալ խումբը համարեն սփյուռք, և հետազոտողներ, որոնք «սփյուռք» եզրույթը կիրառելի են համարում հայրենիքից դուրս բնակություն հաստատած ցանկացած խմբի համար՝ անկախ սփռումի պատճառներից և չափից: Ռուս քաղաքագետ Ի. Լոշկարևը առանձնացրել է հետևյալ երեք տեսաբանական ուղղություններ՝

1. դասական (Վ. Սաֆրան, Գ. Շեֆֆեր, Ռ. Քոհեն),
2. կոնստրուկտիվիստական (Ռ. Բրուբեյքեր, Խ. Թոլոյան),
3. հետարդիական (Փ. Գիլրոյ, Զ. Քլիֆորդ)⁵:

Դասական մոտեցման դեպքում ուսումնասիրությունների համար մեկնակետ են ընդունվում միայն հին սփյուռքները, և փորձ է արվում «սփյուռք» եզրույթին տալու հստակ սահմանում, որոշելու դրա հենքային բնութագրիչները:

Կոնստրուկտիվիստական ուսումնասիրություններում կարևորվում են ազգի, ազգայնականության գաղափարները, սփյուռքի ձևավորման գործընթացը, առանցքային են ինքնությանը վերաբերող հարցերը, մասնավորապես՝ ինքնության հարափոփոխ բնույթը: Դրանցում վերլուծության են ենթարկվում այն անցումային իրավիճակը և գործընթացները, որոնց ամկայության դեպքում, կարելի է ասել, որ հայրենիքից դուրս հաստատված մարդիկ էթնիկ խմբի կարգավիճակից անցում են կատարում սփյուռքի կարգավիճակի:

Հետարդիական մոտեցման համաձայն՝ սփյուռքը բնութագրվում է իբրև մի շարք հակադիր երևույթների կենտրոնացում և համաշխարհայնա-

3 Հաճախ սփյուռքի իդեալական տեսակ է համարվում հրեական սփյուռքը, որի բնութագրիչները հիմք ընդունելով տեսաբան **Վ. Սաֆրան** առաջարկել է սփյուռքի սահմանման հետևյալ առանցքային հատկանիշները. 1. Խմբի անդամները կամ նրանց նախնիները սփռվել են ելման կենտրոնից դեպի երկու կամ ավելի օտար (ծայրամասային) շրջաններ: 2. Պահպանել են իրենց իսկական հայրենիքի տեղակայման, պատմության և նվաճումների մասին հավաքական հիշողությունը, տեղականը կամ առասպելը: 3. Համարում են, որ անհնար է ամբողջությամբ ինտեգրվել ընդունող հասարակությանը, ուստի և մասամբ օտարված են գզում իրենց: 4. Սախնիների հայրենիքը համարում են իրենց իսկական, իդեալական հայրենիքը, ուր իրենք կամ իրենց սերունդներն ի վերջո պետք է վերադառնան: 5. Հավաքական ուժերը նվիրաբերում են հայրենիքի պահպանությանը կամ վերականգնմանը, անվտանգությանը և բարգավաճմանը: 6. Շարունակում են անձնապես կամ միջնորդավորված կապված մնալ հայրենիքին, ինչն էլ պայմանավորում է նրանց համերաշխությունը և էթնոհամայնքային գիտակցությունը (տես **Safran W.**, Diasporas in Modern Societies: Myths of Homeland and Return. “Diaspora”, Toronto, 1996, 1 (1), էջ 83-84):

4 Տես նույն տեղում:

5 Տես **Лощкарёв И.**, Эволюция понятия «диаспора» в политической науке, «Этносоциум и межнациональная культура», М., 2017, N 106 (4), էջ 70-78: Տես նաև **Թորոյան Տ., Սարադյան Մ.**, նշվ. աշխ., էջ 18-20:

ցում, արմատավորվածություն և վերաբնակեցում, փոփոխականություն և կայունություն, պարադոքսային համակցում: Այն դիտվում է իբրև կապող օղակ անցյալի և ներկայի, ծագման երկրի և ընդունող երկրի միջև: Հետարդիական մոտեցումների հիման վրա կատարված ուսումնասիրություններում հենց այս հասկացություններն էլ հիմք են ընդունվում սփյուռքի բնութագրման համար⁶:

Սփյուռքի տեսությունների դասակարգման ևս մի փորձ կատարվել է հայաստանյան սփյուռքագիտության մեջ՝ Ա. Բեժանյանի կողմից⁷: Հեղինակի դասակարգումը հենվում է այն բանի վրա, թե սփյուռքը սահմանելիս ինչ հարթության վրա է հայրենիքը: Ըստ այդմ՝ առանձնացվել են հետևյալ երեք խմբերը.

1. **Հայրենակենտրոն տեսություններ** – աշխարհի տարբեր երկրներում սփռված՝ միևնույն ազգային ինքնությունը կրող անձանց դիտում են որպես միաձույլ ազգային մարմին: Այս դեպքում ընդգծվում են որևէ տրավմատիկ իրադարձության կամ ողբերգության պատճառով մի շարք երկրներում սփռվելը, հայրենիքից դուրս ազգային ինքնության պահպանումը, հայրենիքի հավաքական ընկալումը, ազգային պատկանելության, ընդունող երկրում օտարվածության զգացումը, ինչպես նաև հայրենիք վերադարձի ձգտումը: Ըստ հայրենակենտրոն տեսությունների՝ հայրենիքը և ազգային պետությունը կարող են նույնական չլինել, և առավել կարևոր է հայրենիքը՝ իրական կամ երևակայական, ինչպես նաև նրա հանդեպ հավատարմությունը: Այլ կերպ ասած՝ հայրենիքը սփյուռքի սահմանման առանցքում է: Նման մոտեցում ունեն, մասնավորապես, տեսաբաններ Վ. Սաֆրանը, Կ. Բաթլերը, Գ. Շեֆֆերը, Ռ. Քոհենը, Ռ. Բրուքեյքերը⁸:

2. **Սփյուռքը որպես անկախ միավոր դիտարկող տեսություններ** – հետարդիականության դարաշրջանում սփյուռքը համարվում է միջազգային հարաբերությունների «անլուսափելի» տարր, քանի որ կարող է ինքնակազմակերպվելով առավելագույնի հասցնել իր քաղաքական ազդեցությունն ընդունող երկրում, ճնշում գործադրել հայրենիքի քաղաքականության վրա, անմիջականորեն համագործակցել այլ պետությունների և միջազգային կազմակերպությունների հետ: Այս խմբի տեսաբանները՝ Ս. Վերթովեքը, Ս. Դյուֆուան, Խ. Թոլոյանը, Ա. Ապադուրին, թեն սփյուռքը սահմանում են որպես ուրույն սոցիալական կազմավորում, հաստատություն կամ անդրազգային համայնք, այնուամենայնիվ, հակված են բնութագրելու այն որպես անկախ միավոր⁹:

6 Տե՛ս նույն տեղում:

7 Տե՛ս **Բեժանյան Ա.**, Սփյուռքի մասին տեսությունների համառոտ ակնարկ, «Լրաբեր» հաս. գիտ., Եր., 2013, N 1, էջ 211-227:

8 Տե՛ս նույն տեղում:

9 Տե՛ս նույն տեղում:

3. Հայրենամերժ տեսություններ – ազատական գաղափարների տարածումը և համաշխարհայնացումը հարցականի տակ են դնում սփյուռքի՝ ողբերգական փորձառության և սփռվածության վրա խարսխված սահմանումը և սփյուռքյան ինքնության հիմնաքարերը՝ հայրենիք, համերաշխություն և վերադարձ: Եթե հայրենակենտրոն տեսությունների դեպքում ինքնության առանցքը հայրենիքն է, ապա հայրենամերժ տեսությունների դեպքում սփյուռքյան ինքնությունը սահմանվում է ի հակադրություն ազգային պետության: Սփյուռքի հայրենամերժ տեսություններն առավելապես կենտրոնանում են անհատի վարքագծի վրա: Սփյուռքն ընկալվում է որպես հայրենիքում ապրելու արդարացված այլընտրանք, անհատի ինքնահզորացման հնարավորություն, մարդու համընդհանուր իրավունքների պաշտպանության և արմատական գաղափարների խթանման աղբյուր¹⁰:

Հայրենակենտրոն տեսությունները որպես սփյուռքի կարևոր հատկանիշներ առանձնացնում են հայրենիքի հետ սերտ կապերը, խորհրդանշանները, համայնքների միջև համերաշխությունն ու հուզականությունը, որոնց հիմքը հայրենիքի կարևորումն ու արժևորումն են՝ հպարտության և պատկանելության զգացումով:

Սփյուռքը անկախ միավոր համարող տեսություններում այն դիտարկվում է որպես սոցիալական կառույց, որին բնորոշ են գլոբալ ապակենտրոնացվածությունը, հավաքական ինքնությունը, կազմակերպական որոշակի կառուցվածքը, բազմակողմանի հարաբերությունները սփյուռքյան համայնքների, հայրենիքի և ընդունող պետության միջև, ինչպես նաև ուրույն տնտեսական ռազմավարության և քաղաքական օրակարգի առկայությունը: Սփյուռքի հայրենամերժ տեսություններն առավելապես կենտրոնանում են անհատի վերաբերմունքի վրա և դժվարանում են բացատրել համայնքային ընկալումները և դարձը հայրենիք: Վիճարկվում են հայրենիքի հանդեպ նվիրվածության, պատասխանատվության և էթնիկ համերաշխության գաղափարները, ավելին՝ հայրենիքի հանդեպ հավատարմության մերժումը և հայրենիքից հեռանալու դրական ընկալումը համարվում են սփյուռքի հիմքը¹¹:

Այսպիսով՝ սփյուռքի վերաբերյալ տեսական քննարկումները բազմազան են, և առանձնացված բնորոշիչները ոչ միայն որոշ չափով տարբերվում են միմյանցից, այլև երբեմն տարբեր բևեռներում են: Այդ տեսություններն արտացոլում են ժամանակի ընթացքում «սփյուռք» եզրույթի իմաստաբանական բովանդակության ընդլայնումը, ինչպես և սոցիալական, հասարակական գործընթացներում, ի մասնավորի՝ համաշխարհայնացման և անդրազգայնության ազդեցությամբ կրած փոփոխությունները: Հարկ է

10 Տե՛ս նույն տեղում:

11 Տե՛ս նույն տեղում:

նշել, որ թեև «սփյուռք» եզրույթի սահմանափակ կիրառությանը կողմնակից հետազոտողների առաջարկած սահմանումները հաճախ օգտագործվում են որպես տվյալ երևույթի քննարկման կարևոր գործիք, սակայն, ըստ էության, չի մշակվել այնպիսի սահմանում, որն ընդունելի է բոլորի համար:

2. Սփյուռքների տարբեր առանձնահատկությունների քննարկումը տեսաբանների կողմից

Սփյուռքին տալով տարբեր սահմանումներ՝ տեսաբանները, ինչպես նշվեց, ընդգծում են այս կամ այն բնութագրիչ հատկանիշները և իրենց մեկնաբանությունները կատարում են տարբեր հայեցակետերից: Սփյուռքի դասական տեսության ներկայացուցիչներից Գ. Շեֆֆերը նշում է, որ ներկայիս համաշխարհայնացման պայմաններում սփյուռքին պատկանելը հիմնականում կախված է նրանից, թե ինչպիսին է անհատի ինքնորոշումը, այլ ոչ թե ինչպես են ընդունող հասարակություններն ու կառավարությունները բնութագրում կամ ընկալում տվյալ մարդկանց և խմբերին¹²: Սփյուռքները բազմամյա երևույթներ են: Սա նշանակում է, որ չնայած դարերի ընթացքում որոշ պատմական սփյուռքներ, որոնք այսօր էլ կան, ինչպես, օրինակ, չինականը, հնդկականը, հրեականը և հայկականը, իրոք զգալիորեն փոփոխվել են, սակայն դրանք հին կառույցներ են և հաղթահարել են սեփական ինքնությանն ու գոյությանն ուղղված իրական և վերացական սպառնալիքները՝ դիմակայելով իրենց ոչնչացմանը կամ ուծացմանը միտված պլանավորված և իրական փորձերին: Սա նշանակում է նաև, որ սփյուռքաբաններն ի վիճակի են գոյատևելու որպես առանձին խմբեր այսօրվա համաշխարհայնացող հետարդիական աշխարհում, որտեղ ակնկալվում է, որ էթնիկ փոքրամասնություններն ու սփյուռքները լիովին կվերանան, կծուվեն կամ կվերադառնան հայրենիք¹³: Ըստ Գ. Շեֆֆերի, ժամանակակից սփյուռքների այսպիսի բնույթի և նկարագրի վրա հիմնվելով, կարելի է եզրակացնել, որ համաշխարհայնացման և ազատականացման ներկայիս գործընթացները չեն հանգեցնի սփյուռքների ո՛չ ամբողջական ձուլմանը կամ ամբողջական ինտեգրմանը և հիբրիդացմանը, ո՛չ էլ վերջնական անհետացմանը: Նույն սկզբունքով, չնայած սփյուռքների աշխարհագրական և ժողովրդագրական սահմաններն անընդհատ փոփոխվում են և ներթափանցելի են, բայց և այնպես, դրանք դեռևս բավականաչափ հստակ գծված են և կարող են մնալ ու պահպանվել: Իրականում համաշխարհայ-

12 Տե՛ս Sheffer G., *Diaspora Politics. At Home Abroad*, New York: Cambridge University Press, 2003, էջ 90:

13 Տե՛ս նույն տեղում:

նացման, ազատականացման և բազմամշակութայնության ներկայիս միտումները և դրանց ազդեցությունները ավելի շատ հզորացնում են որոշ սփյուռքների: Դրանք ապահովում են մշակութային, գաղափարական, տնտեսական և սոցիալական լրացուցիչ ռեսուրսներ ու միջոցներ, որոնք նպաստում են սփյուռքների կայուն գոյությանը¹⁴:

Սփյուռքի տեսաբաններից ոմանք (Խ. Թոլոյան, Ս. Վերթովեք, Ք. Բաթլեր, Ռ. Բրուքեյքեր և այլք) մշտապես հայրենիքից դուրս բնակվող անձանց համարում են վերազգային սուբյեկտներ: Նրանք պնդում են, որ ինչպես գոյություն ունեցող ազգերն ու էթնիկ խմբերը, այնպես էլ սփյուռքները, Բենեդիկտ Անդերսոնի հայտնի եզրույթով, մտատիպային համայնքներ (imagined communities) են: Այս մոտեցման վրա մեծապես ազդում են հետարդիական ինացաբանական միտումները, ինչպես նաև համաշխարհայնացման տարբեր կողմերը, ինչպիսիք են միգրացիայի աճը, ժամանակակից հաղորդակցությունը, անհատականացումը և հիբրիդային մշակույթների տարածումը¹⁵:

Հարկ է նշել, որ սփյուռքն անդրազգային բնույթ է ձեռք բերում ժամանակի ընթացքում: Այլ պետություններում հաստատված խմբերի կեցվածքում աստիճանաբար տեղի ունեցող այդ փոփոխությունը Խ. Թոլոյանն անվանում է անցում արքտրային ազգայնությունից դեպի սփյուռքյան անդրազգայնություն (from exilic nationalism to diasporic transnationalism): Նա հիմք է ընդունում այն իրողությունը, որ անդրազգայնության, համաշխարհայնացման ազդեցությամբ ազգայնության այն կերպը, որն ընդհանուր էր հայրենիքի և սփյուռքի համար (սփյուռքի դեպքում՝ արքտրային ազգայնությունը), որոշ սփյուռքների դեպքում փոխատեղվում է նոր՝ սփյուռքյան անդրազգայնությամբ, որի համար մեծ դեր ունեն ենթակայության (subjectivity) և անհատական ինքնության նկատառումները¹⁶:

Սփյուռքյան ազգայնության առաջին փուլը Խ. Թոլոյանն անվանում է արքտրային՝ անկախ նրանից՝ գաղթը տեղի է ունեցել բռնության սպառնալիքով, թե սեփական և ընդունող երկրներում առկա հնարավորությունների միջև մեծ տարբերության պատճառով: Այս դեպքում հայրենիքում չապրելն ընկալվում է իբրև կորուստ, տկարություն, սակայն «արքտրի ողբը» հարատև չէ սփյուռքի պատմության ողջ ընթացքում¹⁷: Բազմաթիվ են օրինակները, երբ «արքտրի ողբը» մեղմանում է սփյուռքյան համայնքի ծաղկման ժամանակ և վերսկսվում է միայն անկայունություններ առաջանալու դեպ-

14 Տե՛ս նույն տեղում:

15 Տե՛ս **Gabriel Sh.**, The Diaspora Phenomenon in the 21st Century: Ideational, Organizational and Behavioral Challenges, In Opportunity Structures in Diaspora Relations: Comparisons in Contemporary Multi-level Politics of Diaspora and Transnational Identity, Reno: University of Nevada, 2007, էջ 187-214:

16 Տե՛ս **Tölölyan Kh.**, Beyond the homeland: From exilic nationalism to diasporic transnationalism. In The Call of the Homeland: Diaspora Nationalisms, Past and Present. Ed. A. S. Leoussi, A. Gal and A. D. Smith, Amsterdam: Brill, 2010, էջ 27-45:

17 Տե՛ս նույն տեղում:

քում¹⁸: Աքսորային ազգայնության գլխավոր բնութագրիչներն են. ա) հայրենիքը սրբազան է կամ կենտրոնական կամ էլ երկուսը միասին, բ) հեռանալ նրանից նշանակում է վտանգել ազգային ինքնությունը, որն այնուամենայնիվ կարելի է պահպանել կազմակերպությունների ջանքերով, գ) ազգային ինքնության միջուկը համարվող բարքերն ու արժեքները, փորձառությունը պետք է մնան «անաղարտ», իրենց արմատներին «հավատարիմ»¹⁹: Հատկանշական է, սակայն, որ ազգային ինքնությունը դրսում պահպանելու ջանքերը ձախողվում են այնքանով, որ նախնական դիմագիծը կորչում է կամ փոփոխվում, և հաջողվում են, եթե առկա են հետևյալ պայմանները. ա) աքսորված ազգը, չնայած կրած փոփոխություններին, մնում է բավականաչափ տարբեր ընդունող երկրի բնակչությունից. այդ տարբերությունը որպես առանձին համայնք պահպանվելու երաշխիքն է, բ) առաջ է գալիս վերադարձի գաղափարախոսությունը. հայրենիքը (կենտրոնը) դիտվում է իբրև պատկանելության իդեալական տիրույթ, ազգային ամենախոր արժեքները կրող վայր, նյութական և խորհրդանշական այն հատկանիշների աղբյուր, որոնք ընդհանուր են հայրենիքում և սփյուռքում բնակվողների ինքնություններում²⁰: Քանզի աքսորային ազգայնության առաջնային հատկանիշը հայրենակենտրոնությունն է:

Անցումը դեպի սփյուռքյան անդրազգայնություն արտահայտվում է հայրենիքի հանդեպ կեցվածքի, հայրենիք-սփյուռք փոխգործակցության փոխակերպմամբ: Սփյուռքյան անդրազգայնությունը ևս բնութագրվում է հայրենիքի պահպանման և անվտանգության ապահովման հանձնառությամբ, սակայն այդ հանձնառությունը այլևս չի զուգորդվում հայրենիքի վերաբերյալ այն տեսակետով, որ այն ազգային ինքնության անվիճարկելի կենտրոնն է: Անդրազգային ցանցում կենտրոնը (հայրենիքը) դառնում է կարևոր հանգույց. ցանցի բոլոր ճյուղերը կապված են հայրենիքին, սակայն ոչ մեկը լիապես ենթադասված չէ նրա դիսկուրսիվ և բարոյական հրամայականներին կամ քաղաքականությանը՝ բացառությամբ այն դեպքի, երբ հարցը վերաբերում է պետության պահպանությանը և անվտանգությանը: Դեպի սփյուռքյան անդրազգայնություն անցման պատճառներից են մասնակի ինտեգրումը ընդունող երկրում, բազմամշակութայնությունը (multiculturalism) և համաշխարհայնացումը²¹: Այդ անցման հատկանիշները խորությամբ ըմբռնելը կարևոր է սփյուռքի և հայրենիքի միջև փոխգործակցությունն առավել արդյունավետ դարձնելու տեսանկյունից: Ուստի Խ. Թոլոյանն ընդգծում է, որ անհրաժեշտ է հաշվի առնել, որ ժամանակակից սփյուռքները, ինչպես առհասարակ այսօրվա մյուս սոցիալական կազմա-

18 Տե՛ս նույն տեղում:

19 Տե՛ս նույն տեղում:

20 Տե՛ս նույն տեղում:

21 Տե՛ս նույն տեղում:

վորումները, ավելի շուտ ցանցային, քան կենտրոն-ծայրամասային հանրություններ են: Նրանք մերժում են հիերարխիան, սակայն դրական են արձագանքում լավ առաջնորդությանը²²:

Սփյուռքի հետգաղութատիրական տեսությունը վիճարկում է սփյուռքի ձևավորման՝ տրավմատիկ իրադարձությունների և սփռվածության վրա խարսխված սահմանումը: Հետգաղութատիրական տեսության համաձայն՝ պետք է ոչ թե խուսափել սփյուռքից, այլ այն ընդունել որպես համայնքային ամուր փոխհարաբերությունների և պատկանելության այլընտրանք, որին բնորոշ են հիբրիդային մշակույթները, կենտրոնի բացակայությունը²³:

Սփյուռքագիտության մեջ տեսական մակարդակում քննարկվող հիմնախնդիրների շարքում կարևոր տեղ են զբաղեցնում ինքնությանը՝ որպես սփյուռքի առանցքային բնութագրիչ տարրին վերաբերող հարցերը: Գ. Շեֆֆերն ընդգծում է, որ սփյուռքյան ինքնության վերաբերյալ գիտական լայն քննարկումները պայմանավորված են նրանով, որ ինքնությունը՝ որպես սոցիալ-հոգեբանական երևույթ, ինքնին բարդ է և ունի տարբեր շերտեր: Դրա հիմքում ընկած է նախ էթնիկ գիտակցության, իսկ հաջորդիվ՝ սփյուռքի ինքնագիտակցության ձևավորումը: Սփյուռքը կարող է ձևավորվել առանց ինքնությունը հստակ ձևակերպելու, սակայն նրա հետագա զարգացման համար առաջ է գալիս ինքնությունը պահպանելու անհրաժեշտությունը²⁴, և այդ տեսանկյունից կարևոր են սփյուռքաբնականների՝ էթնոագգային ամբողջությանը պատկանելու գիտակցումը, նույնականացվելու գիտակցված ընտրությունը²⁵:

Վ. Սաֆրանը, ընդգծելով սփյուռքի համար ինքնության պահպանման կարևորությունը, անդրադառնում է հայերի և հրեաների օրինակին: Վերջիններս մշտապես ակտիվ դերակատարություն են ունեցել ընդունող երկրի հասարակական կյանքում՝ պահպանելով սեփական ինքնությունը: Ապրելով հայրենի երկրի սահմաններից դուրս, հիմնվելով հավաքական հիշողության ու միևնույն լեզվամշակութային պատկանելության վրա՝ հայերն ու հրեաները ժամանակի ընթացքում տարբեր երկրներում հիմնել և զարգացրել են կրոնական և մշակութային կենտրոններ: Ընդունող երկրներում ունեցել են միջնորդի դեր՝ մեծ ձեռքբերումների հասնելով առևտրի, գիտության և մշակութային ոլորտներում՝ նպաստելով ընդունող հասարակությունների առաջընթացին: Ձգտելով սեփական ինքնության և համայնքի պահպանմանը՝ ընդունող երկրների համար ձեռք են բերել որոշակի արժեք²⁶:

22 Տե՛ս **Papazian T.**, Armenian Diasporas and Armenia: Issues of Identity and Mobilization: An interview with Khachig Tölölyan: *Études arméniennes contemporaines*, 2014, էջ 83-101:

23 Տե՛ս **Բեժանյան Ա.**, *Մշվ. աշխ.*:

24 Տե՛ս **Sheffer G.**, *Diaspora Politics...*, էջ 49:

25 Տե՛ս **Sheffer G.**, *The Diaspora Phenomenon in the 21st Century...*, էջ 187-214:

26 Տե՛ս **Safran W.**, *Մշվ. աշխ.*, էջ 84-99:

Ըստ Գ. Շեֆֆերի՝ խմբի ինքնությունը սկզբնապես ձևավորվում է հայրենիքում, այնուհետև հարմարեցվում է սփռված խմբերի կարիքներին՝ հաշվի առնելով հյուրընկալ երկրների պայմանները: Այն հարմարեցվում է մշակութային, սոցիալական, քաղաքական և տնտեսական ոլորտներում տեղի ունեցող փոփոխություններին, ուստի սփյուռքները երբեմն ի հայտ են բերում հիբրիդացում: Նրանց ինքնությունները հիմնված են արյունակցական կապերի, ֆիզիկական հատկանիշների, լեզվի, պատմական հիշողությունների, ընդհանուր հետաքրքրությունների և մշակույթի վրա, ներառյալ կրոնական հավատալիքները և ծեսերը, իսկ այս բոլորը հենվում են մի տարածքի հետ ամուր կապի վրա, որը ծագման երկիրն է՝ հայրենիքը: Վերջինս ավելին է, քան պարզապես էթնիկ խմբին պատկանող տարածքը: Այն սփյուռքաբնակների համար ունի զգացական կարևորություն: Այսպիսի տրամադրվածությունն անհրաժեշտ է խումբը միգրանտներից համախմբված սփյուռք դարձնելու համար²⁷:

Ըստ ֆրանսիացի սփյուռքագետ Մ. Բրյունոյի՝ սփյուռքյան ինքնությունը ձևավորվում է այն ժամանակ, երբ համայնքը հարմարվում է այն երկրի պայմաններին, որտեղ բնակվում է, կապ է հաստատում այլ վայրերում բնակություն հաստատած հայրենակիցների հետ՝ նպատակ ունենալով մեկտեղելու հավաքական ինքնության պահպանմանն ուղղված ջանքերը: Տարբեր երկրներում ձևավորված համայնքների միջև ստեղծվող կապերը կարող են լինել տարբեր բնույթի՝ համայնքային, կրոնական, հասարակական, քաղաքական, տնտեսական, ընտանեկան, կամ հիմնված լինել հայրենիքը կորցնելու ընդհանուր հիշողության վրա: Ըստ Մ. Բրյունոյի՝ սփյուռքն ունի խորհրդանշական բնույթ, ինչը հնարավորություն է տալիս հաղթահարելու հեռավորության խոչընդոտը²⁸:

Գ. Շեֆֆերը նշում է, որ միգրանտների ճակատագիրը հյուրընկալող երկիր հասնելուց հետո, այսինքն՝ այն հարցը, թե նրանք կանհետանան, կծուվեն, թե կպահպանեն իրենց ինքնությունը և կշարունակեն գոյություն ունենալ որպես սփյուռք, մեծապես կախված է իրենց սեփական ընտրությունից՝ կամ ձուլվել, կամ որդեգրել վճռական կեցվածք ձուլման դեմ²⁹: Ռ. Քոհենը գտնում է, որ սփյուռքյան համայնքներն ունեն հավաքական ինքնություն, որի առանցքային տարրերն ընդհանրական են այլ երկրներում հաստատված սփյուռքաբնակների համար ևս: Այս դիտանկյունից սփյուռքյան ինքնությունը ինչ-որ առումով մեկ ամբողջություն է, որը քաղաքական և մշակութային ակտիվ գործունեության արդյունք է³⁰:

27 Տե՛ս Sheffer G., Diaspora Politics..., էջ 100:

28 Տե՛ս Bruneau M., Diasporas et espace transnational. Anthropos-Economica. Paris, 2004, էջ 7-43: Տե՛ս նաև Թորոյան Ս., Սարադյան Մ., նշվ. աշխ., էջ 55:

29 Տե՛ս Sheffer G., Diaspora Politics..., էջ 52:

30 Տե՛ս Cohen R., նշվ. աշխ., էջ 11-12:

Ս. Հոլլը գտնում է, որ, ինքնությունն արդեն իսկ կայացած փաստ համարելու փոխարեն, նախընտրելի է համարել «արտադրանք», որը երբեք չի ամբողջանում և մշտապես ձևավորման ընթացքի մեջ է: Մշակութային ինքնությունը, ինչպես յուրաքանչյուր իրողություն, որն ունի պատմականություն, ենթակա է մշտական կերպափոխությունների: Հեռու լինելով անցյալի մի հիմնարար կետից սկսած հավերժորեն ամրագրված լինելուց՝ այն ենթակա է պատմության, մշակույթի և ուժի (իշխանության) շարունակական «խաղին»: Սփյուռքյան ինքնությունը մշտապես ստեղծվում և վերստեղծվում է նորովի՝ կերպափոխությունների և տարբերությունների միջոցով: Սփյուռքի ինքնությանը միշտ չէ, որ բնորոշ է միատարրությունը: Սփյուռքին կարող են բնորոշ լինել տարասեռությունը, բազմազանությունը, ինչպես նաև հիբրիդացումը: Այսինքն, ըստ անհրաժեշտության, սփյուռքի ինքնությունը կարող է պահպանվել ոչ թե ի հակադրություն ընդունող երկրում առկա տարբերության, այլ վերջինիս հետ համադրվելով և հիբրիդացմամբ³¹:

3. Տեսությունները և իրականությունը

Սփյուռքի վերաբերյալ տեսական և առանձին սփյուռքների նվիրված էմպիրիկ մեծաքանակ ուսումնասիրություններին զուգահեռ առկա է գիտական բանավեճ, թե սփյուռքի վերաբերյալ տեսական վերացարկումներն ունեն արդյոք գործնական արժեքավոր կիրառություն: Նման հարցադրումը պայմանավորված է նրանով, որ սփյուռքը կազմող մարդիկ և խմբերը խիստ բազմազան են³²: Տարբեր են ոչ միայն առանձին էթնիկ խմբերն իրենց պատմությամբ, սփյուռքի ձևավորման յուրահատկություններով, հայրենիքի ընկալմամբ, այլև միևնույն էթնիկ ծագումն ունեցող սփյուռքը կարող է ձևավորված լինել բազմազան շերտերից, որոնք տարբեր ժամանակների միգրացիոն հոսքերի արդյունք են, ուստի և ունեն հավաքական ինքնության և հիշողության տարբերություններ:

Սփյուռքի տեսություններից յուրաքանչյուրն ապահովում է երևույթի մեկնաբանման, ըմբռնման և իմաստավորման նոր շրջանակ, որն ունի իր ուժեղ և խոցելի կողմերը: Մասնավորապես սփյուռքի դասական տեսությունը դարձել է նկարագրական-տիպաբանական գործիք, որը թույլ չի տալիս անցնել այնպիսի բնութագրիչներից այն կողմ, ինչպիսիք են էթնիկությունը, սփռումը, հայրենիքը, ծագումը, և չի ապահովում վերլուծական

31 Տե՛ս Hall S., Cultural identity and diaspora. In Jonathan Rutherford (ed.) Identity: community, culture, difference, London: Lawrence & Wishart, 1990, էջ 235:

32 Տե՛ս Sahakyan V., Between Host-Countries and Homeland: Institutions, Politics and Identities in the Post-Genocide Armenian Diaspora (1920s to 1980s), A dissertation submitted in partial fulfillment of the requirements for the degree of Doctor of Philosophy (Near Eastern Studies) in the University of Michigan, 2015, էջ 4:

շրջանակ՝ լիովին հասկանալու սփյուռք երևույթը որպես սոցիալական վիճակ կամ սոցիալական գործընթաց: Այն սահմանում է հստակ չափանիշներ, թե որ խմբերը կարող են համարվել սփյուռք, որոնք՝ ոչ: Սակայն այդ չափանիշները՝ տրավմատիկ սփռում, պատկանելության զգացում հայրենիքին, էթնիկ ինքնության կոլեկտիվ գիտակցություն, օտարվածությունը ընդունող հասարակությունից, նախնիների երկիր վերադառնալու ցանկություն և այլն, տեսության առանցքի վերածելը որոշ առումով համասեռ է դարձնում սփյուռքյան խիստ բազմազան փորձառությունը, հիշողությունները: Տեսական ընդհանրացումների խոցելիությունն ավելի տեսանելի է, հատկապես երբ համադրվում են տեսությունը և ավելի փոքր, կոնկրետ խմբերի օրինակները: Մասնավորապես Բեռլինի Հումբոլդտի համալսարանի հետազոտող Ա. Հարությունյանը, հիմնվելով դաշտային աշխատանքի արդյունքների վրա, վիճարկում է դասական տեսության երկու հենքային հասկացություններ՝ **սփռումը** և **էթնիկ ծագումը**՝ նշելով, թե ինչպես կարող է հայկական ծագում ունեցող՝ Թուրքիայից եկած հյուր աշխատողը (guest worker), որը 1915 թ. ցեղասպանությունից հետո շարունակել է ապրել Թուրքիայում և Բեռլինում հայկական համայնքի հիմնադիր-անդամ է, համարվել հայկական սփյուռքի մաս: Կարո՞ղ է արդյոք այն խումբը, որը չի սփռվել, ինչպես, օրինակ, Թուրքիայի հայերի դեպքում է, կամ այն խումբը, որի սփռման մասին հիշողությունն արդեն տրանսֆորմացվել է սիմվոլների և ծեսերի, ինչպես, օրինակ, Լեհաստանի հայերի դեպքում է, համարվել սփյուռք: Դիտարկելով Լեհաստանի հայերի օրինակը՝ Ա. Հարությունյանը նշում է, որ Լեհաստանի հայերը, որոնց նախնիներն այդտեղ են գաղթել 19-րդ դարում կամ ավելի վաղ, և որոնք իրենց անվանում են «հայկական ծագում ունեցող լեհեր», ինչպես նաև «նոր» հայերը՝ «հայաստանցիները», հրաժարվում են Սփյուռքին պատկանելուց. առաջինների դեպքում պատճառը ժամանակային մեծ հեռավորությունն է, երկրորդների դեպքում՝ հարենիքի՝ Հայաստանի Հանրապետության գոյությունը: Տեսության և իրականության այսպիսի հակադրությունը հիմք է տալիս հարցադրում կատարելու, որ եթե հետազոտողները որևէ խումբ համարում են սփյուռք՝ հիմնվելով էթնիկ ծագման կամ սփռված լինելու փաստի վրա, հաշվի՞ են առնում արդյոք իրական փորձառությունը: Սփյուռքի դասական տեսության քննադատության պատճառներից է նաև այն, որ սփյուռքը դիտվում է ծայրամաս, հայրենիքը՝ կենտրոն, և չափից ավելի մեծ ուշադրություն է դարձվում «կենտրոնից» մարդկանց սփռված լինելու փաստին՝ առանց վիճարկելու առհասարակ կենտրոնի՝ հայրենիքի գաղափարը, որը որոշ սփյուռքների դեպքում, օրինակ՝ սևամորթ սփյուռքի, միանշանակ չէ:

Սփյուռքի հետարդիական կամ հայրենամերժ տեսությունները, ի տարբերություն դասական տեսությունների, սփյուռքաբնակների ինքնությունը

սահմանում են ոչ թե հայրենիքի, այլ ազգային պետության հետ հարաբերության համատեքստում. եթե առաջին դեպքում ինքնության առանցքը հայրենիքն է, ապա երկրորդ դեպքում սփյուռքյան ինքնությունը սահմանվում է ի հակադրություն ազգային պետության ընդհանրապես: Սփյուռքն ընկալվում է հայրենիքում ապրելու արդարացված այլընտրանք, որն անհատին ընձեռում է իր ինքնության տարրերի մի մասը էթնիկ ինքնությունից, մի մասը ընդունող հասարակությունից ընտրողաբար վերցնելու հնարավորություն: Առավել կենտրոնանալով անհատի վարքագծի վրա՝ սփյուռքի հետարդիական տեսությունները, սակայն, անկարող են բացատրել համայնքային ընկալումները և դարձը հայրենիք: Սփյուռքին լայն սահմանում տվող տեսական մոտեցումը քննադատվում է նաև այն պատճառով, որ տվյալ դեպքում ջնջվում են բոլոր սահմանները և բառի բուն նշանակությունը: Այսինքն՝ այս պարագայում ծագման երկրից կամ հայրենիքից դուրս ապրող բոլոր տիպի խմբերը՝ փախստականները, ներգաղթյալները, հյուր աշխատողները, էթնիկ խմբերը և այլն, ներառվում են «սփյուռք» հասկացության մեջ, այն դեպքում, երբ սփյուռքը տարբերվում է դրանցից իր ինստիտուցիոնալ կայացման և քաղաքական, հասարակական ակտիվության բարձր մակարդակով:

Սփյուռքի կոնստրուկտիվիստական տեսություններն առավել ձկուն են մեկնաբանում եզրույթի իմաստի և ընդգրկման պատմական փոփոխությունը՝ առանց, սակայն, սահմանման համար որոշակի չափանիշներ առանձնացնելու: Միևնույն ժամանակ դրանք սփյուռքը չեն դիտում որպես կայուն երևույթ, այլ ընդգծում են սոցիալական տեղաշարժերի, գործընթացների, ինքնությունների հիբրիդացման, ինչպես նաև հայրենիքի հետ կապի տարբեր դրսևորումների գոյությունը:

Այսպիսով՝ սփյուռքի վերաբերյալ տեսություններում հայեցակարգային առումով տարբեր կերպ է վեր հանվում և մեկնաբանվում նրա ընդհանրական բնութագիրը, սակայն, համադրելով այդ տեսություններում ընդգծվող հիմնական հատկանիշները, կարելի է առանձնացնել հետևյալները.

- 1) սփյուռքները կապ են պահպանում այլ երկրներում հաստատված իրենց հայրենակիցների համայնքների և հայրենիքի հետ,
- 2) սփյուռքայնությունը կենսագործունեության ձև է, որտեղ առանցքային նշանակություն ունի քաղաքական դերակատարումը,
- 3) համայնքները պահպանում են իրենց ինքնությունը, հայրենիքի, լեզվի, կրոնական, սոցիալական և մշակութային առանձնահատկությունները անեղծ կամ միախառն, երկմշակութային՝ հիբրիդային ձևով,

4) սփյուռքյան անդրազգայնության մեջ հայրենիքը մնում է կարևոր, բայց ոչ կենտրոնական, մյուս կողմից՝ հայրենիքի առաջնայնության մերժումը չի հանգեցնում ձուլման,

5) սփյուռքին բնորոշ են բարձր կազմակերպվածությունը, ինստիտուտների և կազմակերպությունների հիմնումը, որոնց գործունեությունն ուղղված է էթնիկ և դավանական ինքնության պահպանմանն ու զարգացմանը,

6) սփյուռքներն ավելի շուտ ցանցային, քան կենտրոն-ծայրամասային հանրություններ են և մերժում են հիերարխիան, սակայն դրական են արձագանքում լավ առաջնորդությանը,

7) սփյուռքյան համայնքն ինքն իրեն դիտում է իբրև կապված, սակայն միաժամանակ տարբեր թե՛ նրանցից, որոնց շրջանում հաստատվել է, թե՛ հայրենիքում ապրող նույնէթնիկ ժողովրդից,

8) սփյուռքի կյանքի կազմակերպման համար կարևոր դերակատարություն ունի առաջնորդող ընտրախավը՝ էլիտան:

Հրածին Վ. Վարդանյան – տպագրված 6 գիտական հոդվածների հեղինակ, մեկ գրքի համահեղինակ: Հետաքրքրությունների շրջանակն ընդգրկում է հայկական սփյուռքի պատմությանը, սփյուռքների վերաբերյալ արդի տեսություններին առնչվող հարցերը:

Էլ. հասցե՝ hracin.vardanyan@gov.am

Summary

THE MAIN CHARACTERISTICS OF DIASPORA In contemporary diasporological theories

Hratsin V. Vardanyan

Key words – Diaspora theories, identity, nationality, transnational network, ethnos, homeland, host country, transformations, identification, classical diaspora, postmodern.

Since the end of the 1980s, and especially since the 1990s, the interest of academics towards diasporas has grown dramatically in a number of countries around the world. Large-scale theoretical and empirical studies have been conducted. If in the 1990s many of the theoretical studies on the diaspora started

from the idea that the diaspora has not been properly examined by science, today, in fact, one can summarize, analyze the theoretical generalizations made over three decades, although researchers have different approaches and scientific debates continue on a number of issues. It is noticeable that the interest towards diasporas is conditioned by the growth of the significant economic, political, social and cultural influence that diasporas have in the modern world.

Theoretical discussions about diaspora are not only somewhat different from each other, but are sometimes at different poles. These theories reflect the expansion of the semantic domain of the term diaspora over time, as well as changes in social processes, in particular, under the influence of globalization and transnationalism. Taking into account the chronological developments of the definition and the description of the main features of the diaspora, different theoretical directions were distinguished: from classical to constructivist and postmodern.

Only the old diasporas are taken as a starting point for the classical theory of the diaspora; an attempt is made to give a clear definition to the term diaspora, to determine its basic characteristics.

Constructivist studies use the ideas of nation, nationalism, the process of diaspora formation, issues of identity, in particular the changing nature of identity. Constructivist studies analyze the transition and processes, in the presence of which it can be said that people settled outside the homeland move from the status of an ethnic group to the status of the diaspora.

According to the **post-modern theory**, the diaspora is characterized by a number of opposite phenomena: centralization, globalization, radicalization, resettlement, variability, stability, and paradoxical combination. It is seen as a link between the past and present, the country of origin and the host country.

Among the issues discussed at the theoretical level on the diaspora, the issues of identity are basic. Like other issues related to the Diaspora, theorists have different approaches to issues of identity; the existence of wide scientific discussions is due to the fact that identity, as a social-psychological phenomenon, is complex in itself; it has different layers. In the case of the diaspora, it is based first on the formation of ethnic self-consciousness, and then on the formation of a typical diaspora self-consciousness. Diaspora identity is not always homogeneous, it can be characterized by heterogeneity, diversity, as well as hybridization.

ОСНОВНЫЕ ХАРАКТЕРИСТИКИ ДИАСПОРЫ

В современных теориях диаспоры

Грацин В. Варданян

Ключевые слова – теории диаспоры, идентичность, национальность, транснациональная сеть, этнос, родина, принимающая страна, трансформации, идентификация, классическая диаспора, постмодерн.

С конца 1980-х и особенно с 1990-х годов интерес ученых мира к диаспорам резко возрос. Проведены масштабные теоретические и эмпирические исследования. Если в 1990-е годы многие теоретические исследования диаспоры начинались с идеи о том, что диаспора не была должным образом изучена с научной точки зрения, то сегодня, фактически, можно обобщить теоретические выводы, сделанные за три десятилетия, несмотря на то, что ряд вопросов продолжает вызывать среди исследователей научные дебаты, в ходе которых обозначаются разные подходы к изучению понятия «диаспора». Примечательно, что интерес к диаспорам обусловлен ростом их экономического, политического, социального, культурного влияния в современном мире. Теоретические выводы исследователей о диаспоре не только отличаются друг от друга, но иногда находятся и на разных полюсах. В этих теориях отражается тот факт, что семантическая область термина «диаспора» с течением времени расширяется, а также подвергается изменениям в социальных процессах, в частности, под влиянием глобализации и транснационализма. Принимая во внимание хронологию развития определения термина «диаспора», при описании основных её характеристик были выделены различные теоретические направления: от классического до конструктивистского и постмодернистского.

За отправную точку **классической теории диаспоры** были взяты только давно существующие диаспоры, и делается попытка дать четкую формулировку термину «диаспора», определить её основные характеристики. В **конструктивистских исследованиях** анализируются идеи нации, национализма, процесс формирования диаспоры, ключевые вопросы идентичности, в частности меняющийся характер идентичности, а также переходные процессы, при наличии которых можно сказать, что люди, осевшие за пределами

родины, переходят от статуса этноса к статусу диаспоры. Согласно **теории постмодерна**, для диаспоры характерен целый ряд противоречащих друг другу явлений: централизация, глобализация, радикализация, переселение, изменчивость, стабильность и парадоксальное сочетание различных социальных групп. Она рассматривается как связующее звено между прошлым и настоящим, страной происхождения и принимающей страной.

Среди вопросов, обсуждаемых на теоретическом уровне, при анализе ключевой характеристики диаспоры видное место занимают вопросы идентичности. Как и при рассмотрении многих вопросов, связанных с диаспорой, у теоретиков взгляды на понятие «идентичность» расходятся. Обсуждение вопроса идентичности во время научных дискуссий связано с тем, что понятие «идентичность» как социально-психологический феномен сложно само по себе, трактуется по-разному. В частности, понятие «диаспора» основано сначала на формировании этнического самосознания, а затем на формировании типичного диаспорского самосознания. Идентичность диаспоры не всегда однородна, ее можно охарактеризовать как неоднородностью, разнообразием, так и гибридизацией.

REFERENCES

1. **Bezhanyan A.**, Sp'yurk'i masin tesut'yunneri hamarot aknark, "Lraber" has. git., Yer., 2013, N 1 (**In Armenian**).
2. **Loshkarjov I.**, Evoljucija ponjatija "Diaspora" v politicheskoj nauke, "Etnosocium I mezhnacional'naja kul'tura", 2017, 106 (4) (**In Russian**).
3. **T'orosyan T., Saradyan M.**, Haykakan sp'yurk'i hnaravorut'yunnerë yev azdets'ut'yunë Hayastani Hanrapetut'yan sots'ial-k'aghak'akan gortsënt'ats'neri vra, Yer., 2017 (**In Armenian**).